

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան դիմը 10 րուր, կէս տարեկան 6 րուր:
Առանձին հոմարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարապաշտարայի պիմում են ուղարկել:
Тифлисс. Редакция «Мелі»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է, ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար գծարում են
խորանային րոտին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հայոց տոնախմբութիւնը Բաղարիւր-յում Նամակ Թիւրքիայից: Նամակ Թիւրքիայից: — ՀԵՌԱՎԻՐԵՆԻ: — ԲԱՅԱՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ: ՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ապագայ ուսուցչական ժողովի առիթով:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԽՄՈՒՆՔՆԵՐ

Ռուսաստանի մէջ պատահած հրէաների սարսափելի ջարդը աղմուկ գցեց ամբողջ Եւրոպայում:

Անգլիական պարլամենտում հարցում եղաւ հրէաների դուրսեւն մասին Ռուսաստանում: Վերջին պատգամաւորը պահանջեց ներկայացնել պարլամենտին հրէաների վերաբերութեամբ ուսումնասիրութեան պատճէն և հարցրեց արդեօք Անգլիան չէ՞ կարող աշխատել փոփոխել տալ այդ օրէնքների գծին այն մասը, որ վերաբերվում է Ռուսաստանում ապրող օտարահայտակ հրէաներին:

Ապանիական կառավարութիւնը յայտնեց որ մեծ ուրախութեամբ կընդունի այն բոլոր ուսումնասիրութեան, որոնք կը կամենան զաղծել Սպանիա, իրանց հին հայրենիքը, որովհետեւ ինչպէս յայտնի է պատմութիւնից, Եւրոպայի հրէաները բոլորն էլ Սպանիայից են դուրս եկել:

Փարիզում հիմնվել է մի մասնաժողով, որի նպատակն է օգնութիւն հասցնել հարաւային Ռուսաստանում փնտրված հրէաներին:

Նոյն տեսակ կոմիտէտ հիմնվել է նորբրում և Բերլինում: Չը նայելով որ վերջին ժամանակները Գերմանիայում կազմվել է մի հակահրէական կուսակցութիւն, որ կամենում է զրկել գերմանական հրէաներին երկրի քաղաքական և հասարակական իրաւունքների մի մասը, այնուամենայնիւ Գերմանիայում կան բաւական թւով ծնունդ առնողներ, ազատամիտ մարդիկ, որոնք շատ լաւ են հասկանում որքան անօրինակ է սիրտը հրճվում է, երբ մէկ ուրախատիւ լուր է լսում իր եղբայրակիցների մասին և ընդհակառակը, կամ մէկ ուրախատիւ երեւոյթ է նկատում:—Այս ուրախատիւ երեւոյթներին պէտք է վերագրել և հետեւեալը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՔԱՑ ՌԵՍՊԵՔՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Վերջին ուսումնասիրութեան պատերազմը ոչ միայն յառաջ հանեց Եւրոպային «Հայկական հարցը», այլ և աւելի շօշափելի յարաբերութիւնների պատճառ եղաւ ուսումնասիրող և տաճկահայոց մէջ: Այս շարժման միջոցաւ պատճառն է Հայաստանի անտանելի, ծանր վիճակը, որ տեսապէս որ կամենաք, նայեցե՛ք: Ռուսահայոց մասում մեծ ծառայութիւն արեց և անում է ազգին, կարողացածին չափ պարգեւով հասարակական մտքում այս շարժման բարոյական և ներթափանց կողմերի բարձր նշանակութիւնը, այն, մասում ցոյց տալով ներկայից ցաւալի, աղետաւի, թշուառ վիճակը, զարթեցրեց հասարակութիւնը սովորական քննիք, բազմաթիւ օրերի յոյս տալով, հասարակութեան եռանդը կրկնապատկեց և վերջին օրերն է և օգնում է իր խեղճ արիւնակիցներին աղաւաղել յիշեալ վիճակից: Հասարակական է ուրեմն, որ ամեն մէկ ազգա-

թաւի է այժմեան դարում թշնամութիւն յարուցանել մի ամբողջ ցեղի կամ ազգանդի դէմ, զրկել ուղեւոր պետութեան քաղաքացիների մի մասը իրանց քաղաքական տնտես-նաբարելի իրաւունքներից: Այն մասնաժողովը որ այս օրերս կազմվել է Բերլինում, Ռուսաստանում փնտրված հրէաներին օգնելու համար, բաղկացած է Գերմանիայի ինտելիգենցիային պատկանող ամենաբերեւելի անձնութիւններից: Այն ազգարարութեան տակ, որ հրատարակել է մասնաժողովը, ստորագրված են քրիստոնէական Գերմանիայի աւանդաւորների անունները, ինչպէս օրինակ՝ Բերլինի այժմեան քաղաքապետը և լայնատաղի նախկին նախագահ Ծորկենբէկ, Բերլինի համալսարանի ղեկավար շեմֆօլց, երեւելի քիմիկոս Հոֆման, առաջադէմ կուսակցութեան պատկանող յայտնի Գունկէր, պրոֆէսորներ Վիրտով, Մոմկէն, Կիրսով և այլն: Պէտք է կարծել, որ բացի գովելի ցանկութիւնից օգնել Ռուսաստանում փնտրված հրէաներին, այդ բոլոր պարոնները, որոնք ամենաքաջ մարտնչողներից են եղել հակահրէականների դէմ, ուղեցել են օգնող քաղել այդ դէպքից՝ զանազան խաւարած միտքներին մի նոր հարուած հասցնելու համար, մանաւանդ որ շուտով սկսվելու են գերմանական պարլամենտի համար նոր ընտրութիւններ և Տրէյլէի, Հենրիցի և Դեմոկրատի պէս խաւար և խորքաւ անձինք արդէն ամեն ջանք են գործ դնում ընտրողներին համոզելու հրէաներին թշնամի պատգամաւորներ ընտրելու:

Այդ պատճառով ուսումնասիրութեան հրէաներին օգնող Բերլինի մասնաժողովի ազգարարութիւնը երեւում է մեզ մի նշանաւոր քաղաքական գործ, որ մեծ ազդեցութիւն կունենայ և նոյն իսկ գերմանական քաղաքական ներքին հանգամանքների վրա:

Ահա այդ ազգարարութեան կարճ բովանդակութիւնը: «Համեմատելով նորբում ուսումնասիրութեան պատահած հրէաների ջարդի հետ, պատերազմը մեզ երեւում է մի օրինա-

կան դրութիւն: Այդտեղ տիրում է ոչ թէ բնութեան աւերող ջարդ, ոչ թէ պատմութեան անձնաւոր ճգնաժամը, որ իրաւունք ունեն պահանջել կեանքի զոհեր, այդտեղ տիրում է մարդկային բնասարութեան անգուցալ վայրենութիւնը, որ մենք վաղուց արդէն զգալի ենք համարել: Միջին դարերի բարբարոսութիւնը կրկին կենդանանում է և մարդկութեան առաջադիմութիւնը կասկածելի է դառնում: Մի սարսափելի լուսով է լուսաւորում այդ պատմական եղեռնագործութիւնը՝ ազդեցիկ խաւար ջարդը:»

Նրանք թէ Ռուսաստանում հրէաների դէմ պատահած եղեռնագործ անցքերը ծառայել են որպէս մի դառն դաս այն Գերմանիային, որ երեւելի մտածողներ ունենալուց յետոյ, ազատութեան, կրօնի համբերութեան, քաղաքակրթութեան ներկայացուցիչ լինելուց յետոյ, — սկսել է վերջին ժամանակները ընթանալ ամենազգուշ յետադիմութեան ծանապարհով, շնորհիւ Բիսմարկի, Դեմոկրատի, Տրէյլէի և մարդկութեան նրանց նման խաւար թշնամիների:

Գ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՏՈՆԱԽՄՈՒԹԻՒՆ ԲՈՂԱՔԱՑԱՑՈՒՄ

Ֆիլիպոպոլում հրատարակվող «Марца» քաղաքական լրագրում կարգում ենք հետեւեալը:

Անցեալ կիրակի մեր քաղաքում հայերը տօնեցին եկեղեցու սահմանադրութեան տարեգարծը:—Մենք բոլորներս, որ անցրել ենք շատ երկար տխուր դարեր հոգեւորական և քաղաքական ճնշողութեան տակ և դեռ տեսնում ենք մեր եղբայրներից շատերին ծնված եկեղեցու գլուխներից—չենք կարող չը համարել հայերի այն աշխուժութեանը, որով յիշատակում են այսօր իրենց ժողովրդական եկեղեցական տօնը:

Զար է, պաշտօնաւոր աւելի զեղծված և ահա դրա համար քրիստոնէից դուրսեւն աւելի անմիթար է (Քրիստոնէայից կիսալուսնի տակ Արաբիայում 1880, II, 115):

Այժմ մնում է մեզ միայն միթիարվել յիշեալ երեւոյթով և ջանք դնել, որ յարաբերութիւնները ուսումնասիրող, տաճկահայոց և պարսկահայոց մէջ աւելի յաճախ լինեն իրանց բազմակողմանի հարց ու խնդիրներով և աւելի օգտակար ընթացք ստանան: Այդ ուղղութեան առաջին քայլը կարող է և պէտք է արտայայտվել իրութեան գործում: Մինչև հիմա չազգային լուսաւորութիւն, չազգային ուսումնասիրանքներ և հակառակ, տաճկահայոց տաճկահայոց և այլն, բայց եթէ այսպիսի մէկ բաժանումն չը լինէր այս ուսումնասիրական գործում, այսօր, եթէ տաճկահայերը և պարսկահայերը ծանօթ լինէին մեր ուսումնասիրանքի դուրսեւն, ընդհանուր գործին մեծ օգուտ կը լինէր, թէպէտ և մեր ուսումնասիրանքը մեծ մեծ պակասութիւններ ունեն: Այսպիսի մէկ եղբայրացութեան էք հասնում, երբ կարգում էք այս տարվայ (Մարտի) տպած վիճակագրական տեղեկութիւնները ուսումնասիրական գործին վերաբերեալ:—Կա է մասնաւորապէս տաճկաց և պարսկահայոց վերաբերեալ քաղաքական

Հայ ազգը առանց անցեալի չէ, պատմութիւնը նրանց համար պահպանել է փայլուն տեղեր (երեսներ), բայց նոյն ծախսագիրքը որ մեզ ձգել է շղթայակապ ճնշողութեան ներքոյ—շատ և շատ հառաչանքներից յետոյ հասցրեց նրանց օրհասականին և նրանք կորցրին իրանց անխախտութիւնը:

Յիրաւ է, որ հայերի և բոլորների մէջ չը կայ ազգային ցեղական կապ, չը կայ ոչինչ նսանութիւն լեզուի մէջ, որ առաջին պատահամբ կարելի լինէր զարթեցնել այդ երկու ազգերի մէջ գրաւիչ համակրութիւն, բայց կան ուրիշ կապեր, որոնք կարող են պահպանել բարեկամութիւնը: Թողնելով Բաղարիւրի պատմութեան սկիզբը, որի մեծ մասը պահպանվել է հայ պատմագիրներից և զաղով մեր ազգի ինքնաճանաչութեան ժամանակը, երբ սկսեցինք տկար զիմադրութիւն ունենալ այն ժամանակվայ մեր հոգեւոր իշխանութեան դէմ—կը տեսնենք, որ հայերը երբէք չեն եղել մեր հակառակորդ, ընդհակառակն նրանց մամուլի կողմից, նրանց առաջնակարգ ներգործող մարդկերանցից ըստացել ենք բարոյական օգնութիւն: Այդ մեզ համար անօգուտ չէր, մանաւանդ այնպիսի ժամանակ, երբ զօրեղ տէրութիւնները, որ կարող էին մեծ և ճշմարիտ օգնութիւն տալ մեզ—մնում էին ստոնքութեամբ նայելիս կամ աշխատում էին ստիպելով որ մեր գլուխները խոնարհեցնենք: Բնական պատճառներից մինը, որը կայացնում էր լաւ յարաբերութիւն բոլորներին և հայերի մէջ, այն է որ այդ երկու ազգերը չեն ունեցել երբէք միմեանց հակառակ շահեր և որ երկուսը ևս զտնվում են մի և նոյն տէրութեան հպատակ և տանում են նոյն նեղութիւններն ու հալածանքը, այնպէս որ մի-նի ազատութիւնը տանում է միւսին դէպի ազատութեան ուղիղ և չը շեղող ճանապարհը: Բաղարիւրի ժողովուրդը այն սիւններից մինն էր, որի վրա պտուկած է ընդհանուր ճնշողը, որի հեռացնելը չէ կարող

մեր առաջին կանգնած է մէկ ծանրակշիւ հարց, որ մինչև այժմ պէտք է վճարւած էր, եղել և որի համար հարկաւոր են թէ շատ ժամանակ և թէ շատ նիւթեր, այդ հարցը մեր ընդհանուր ազգային լուսաւորութեան վիճակի հարցն է, որան վերաբերեալ նիւթեր համարեալ թէ չունենք, իսկ եղած նիւթերը, որոնք շատ սակաւ են, բոլորը կցկուտ են, միակողմանի են, հարցի ամենահետաքրքիր կողմերին չեն ուշադրութիւն դարձնում:

Յիշեալ պակասութիւնները լրացնելու, մեր ուսումնասիրական գործը բարեւթելու համար, շուտով պէտք է կայանայ Թիֆլիսում ուսուցչական ժողով, այժմ աչքի առաջ ունենալով վերեւ ասածներս, ևս կաշխատեմ մի քանի դիտողութիւններ անել այդ ժողովի առթիւ:

Այստեղ անշուշտ պէտք է մտաբերած (փորձել) Վեր ապագայ դպրոցական ժողովի յօդուածագրի երկու համակրելի միտքը: Ա՛ որ խորհուրդ է տալի 1882 թ.ին յետաձգել ժողովը և երկրորդը, որի մասին պարոնը վախում է թէ մեղադրվի չափազանցութեան մէջ, այն է՝ թէ չցանկալի է որ ապագայ դպրոցական ժողովում թեմական տեսուչները ներկայացնեն իրենց թեմերի իւրաքանչիւր գիւղի բնակիչների կենցաղավարութեան, աշխարհածանթութեան պարագմունքների վրա համառօտ տեղեկութիւններ:

չը յաջողեցնել մօտ ժամանակումս առանց այն էլ քարուքանդ լինող, ճնշողի խոր-տակ մանր, որի տակ կանգնած են շատ մանկ ազգերը:

Մենք բաղդաւոր ենք համարում, որ կա-րողանում ենք մեր կիսաշուք երկրում տալ յարմար միջոց այդ հարստահարութեմ ազ-գի մի քանի անդամներին, որ յիշատակեն իրոնց տօնը ազատութեն, որպէս զի կարո-ղանան առանց երկրիւղի և նեղութեան ար-տայայտել իրանց սրտի խոր գագաթները և յիշեն բացարձակ կերպով նեղութիւնները, տանջանքները իրանց եղբայրներին, որոնք Ասիայումս են, ուր չարագործութիւնք եր-բէք չեն դադարում և ուր տեղից տանջող հարստահարող որբերի, անպատված աղջիկ-ներին ձայնը չէ կարող հասնել մարդասէր-ների և զթափառների ականջներին: Այդ-պիսի դէպքերում մենք յիշում ենք մեր մի քանի տարի առաջ ունեցած վիճակը և զգում ենք սրտով մեզ առած օգնութիւն-ները մի քանի մեզ համակրող ազգերի և որ պիտի յետ տանք այդպիսի ազգերին մեր ազատութիւնը շնորհելով, որպէս զի կարո-ղանան իրանց մտքերը արտայայտել:

Կար ժամանակ, երբ Բուսիսիան և Ան-բիան ծառայում էին մեզ համար որպէս ապաստանարան մեր փախստականներին, մեր ազատասերներին, որտեղ նրանք կարողանում էին ազատութեն արտայայտել իրանց ցաւալի և տխուր գոգացմունքները և յուսադրում էին լաւ ապագային: Այժմ, այսօր նոր անկախ, ազատ մանր աշխարհները կա-րող են կատարել այդ իսկական պաշտօնը (միսիան, միսիոն): Հարաւային Բուսիսիայի քաղաքացիք ուրախ են և բաւական, որ նրանց ներկայացաւ դէպք որով յետ դարձ-նեն այն, ինչ որ ստացել են իրանց հարե-ւաններից և պատրաստ են միշտ համակրել և պաշտպան հանդիսանալ նրանց, որոնք փնտռում են ազատութիւն: Մենք յուսով ենք, որ մեր նահանգը գտնվելով Բուսիսի ափերից ոչ հեռու, ճնշված ազգերի մօ-տակայքում,—կը լինի միշտ ընդունող և պատաստարան (разсадник) ազատութեան գաղափարներն ևս տարածելու համար և նրա քաղաքացիք, որոնք արդէն սովորեցին ազատ կեանքին, կարող կը լինեն գործ դը-նել իրանց ոյժը, ոչ թէ միայն իրանց ազա-տութիւնը պաշտպանելու, այլ նոյն այդ ա-զատութիւնը տարածեն և իրենց սահ-մաններից դուրս մանր ազգերի վրա: Ըն-դունելութիւնը, որ նոքա կանեն նրանց, ո-

րոնք կարիք ունեն պաշտպանութեան իրանց ազատ գագաթները և յոյսը արտայայտելու համար,—կը լինի ամենագորեղ միջոցը ա-զատ մտքերի դիւրութեամբ տարածելու և ստրկութեան հոգին ոչնչացնելու:

Ինչ որ վերաբերում է հայերին, որոնց համար մենք բաղդ ունեցանք անցեալ կի-րակի զիջանել մի կտոր հող իրենց ժողո-վրդական տօնը յիշատակելու համար կա-տարեալ ազատութեամբ, որ այդպիսի դէպ-քում պէտք է, և ժողովուրդն էլ սպասում է յաջող դիպուածի իր սրտի ցաւալիցու-թիւնը յայտնելու համար,—ցանկի կը լի-նէր որ մօտ ժամանակում իրանց այդպիսի տօները յիշատակվեն ամբողջ աշխարհի մանաւանդ այնտեղ (ինչպէս ծառայութեան անցեալ), որտեղ հայերն են և ամենայն հայի: Այնտեղ մենք ցանկանում ենք որ լսելի լինի ազատութեան ձայնը, որ հողի առնի այն ազգը, որը պահպանել է մեզ հետ եղբայրական սերտ գագաթները: Նրա աշխատասիրութիւնը, մտաւոր գաղափարները, ազնիւ յասկութիւնները ծառայում են ա-մենալաւ գովաստի, որ այդ ազգը ունենալ աւելի լաւ վիճակ, քան թէ ունի ներկա-յում: Տաւ Աստուած, որ մեր բաղձանք-ները կատարվեն:

ՆԱԼՈՒԱԿ ԹԻԻՐԵԻԱՅԻՑ

Վան, 1/13 յունիս 1881

Այս օրեր մի քանի վանքներ վերադարձան այստեղ Տիգրանի Բայազետի մէջ թիւրքաց կա-ռավարութիւնն դրցանէ մի քանի ձերբակալե-լով բանտարկել է, թէ և իւրեանց ձեռք օրինա-ւոր անցադիր ունենին: Կը լսեմք որ բուսիսիայի մի ազգային, Յովհաննէս Եղեղեան անուն, որ Բուսիսիայի տանք անցնելով այստեղ գալ կու-ղէ եղեր, դեռ մինչև այժմ Բայազետի բանտին մէջ կը հեծէ: Սրբօր Բուսիսի տէրութիւնը մինչև երբ այդպէս անտարբեր պիտի մնայ որ իւր երկրին և մեր մէջ յարաբերութիւնները այսպէս դժուարանան, թիւրքաց կառավարու-թեան կողմէն գործադրուած անտեղի խտու-թիւններու պատճառով: Վանի մէջ յատուկ մի մասնաժողով կազմուած է, որ զանազան ան-ձերու վրայ կատակներ անելով հարցաքննու-թեան կենթարկէ: Կ. Պօլսի բժշկական վարժա-րանի ուսանողներն վանքի մի երկուստարդ, Աւետիս Պարթեան, այդ մասնաժողովի առջև երեք ժամ հարցաքննութեան ենթարկուեցաւ թէ ինչու համար Կ. Պօլսի Տիգրանի ճանա-պարհով վերադարձած է Վան և ոչ թէ Երզրու-մի: Թէ ինչու համար իւր ճանապարհորդութեան ժամանակ Տիգրան և ուրիշ տեղեր երկար մնա-ցած է, և այլն: Մասնաժողովը հարցաքննու-

թեան ենթարկեց և պ. Մ. Փորթուզալեան. բայց 6—7 անգամ կառավարութեան դուռը տարուե-լով, հաղիւ թէ մի անգամ հարցաքննութիւն եղած է, զի ուրիշ անգամներ մասնաժողովի ան-դամը մեծամասնութիւնը ներկայ չէ գտնուել: Պ. Փորթուզալեան ընդհանուր դատախազէն (գեներալ պրօկուրօր) ամբաստանուած է կա-ռավարութեան առջև իւր գրգռիչ հայ ժողովը-րէան: Հարցաքննութեան առարկայն եղած է մայիս 10-ին Հայրենասէր ընկերութեան լսարա-րանին մէջ Փորթուզալեանի արած հրապարա-կաստութիւնը Հայաստանի բարեկարգութեանց խնդիրն նկատմամբ: Պ. Փորթուզալեան իւր ա-տենախօսութեան համար հարկ եղած բացատ-րութիւնները տալով, խօսածները ստորագրած և արձակուած է, բայց դեռ մասնաժողովը իւր վերջնական վճիռը տուած է:

Կառավարութեան կողմէն հրահանգներ եկած էր, որ այսուհետև ո և է աղգային գործի համար դուրսարձակ չը լինի վարժարանաց մէջ: Գարեգին վարդապետ Սրուանձտեանց որ, իւր առաջնորդ-ական փոխանորդ, պարտաւոր էր բացատրու-թիւններ տալ նահանգապետ փաշային և դարե-րէ ի վեր մեր ունեցած այդ իրաւունքը պաշտ-պանել, ամենայն խնամարձութեամբ կընդունի այդ արգելքը և իւր կողմէն ալ ոյժ տալով, բո-րի եկեղեցեաց մէջ կարողացուին կը տայ այդ հրահանգները, խափա պատուիրելով որ ամենա-խորին երկրագործութեամբ հնազանդին փաշայի անիրաւ հրահանգին:

Մայիսի 24-ին մեր աղգային սահմանադրու-թեան 21-րդ տարեդարձի հանդէսը վրայ հասաւ: 21 տարեի ի վեր այդ օրը մեծ հանդէսով կը տօնուի թէ Կ. Պօլսի և թէ Հայաստանի շատ քաղաքները, ի յիշատակ ամբողջապետութեան կործանուելուն և սահմանադրական դրութեան հաստատուելուն: Նահանգապետ փաշան ուղեց այս անգամ արգելել այդ աղգային հանդէսը և իրեն հլու կամակատար գործիք ունեցաւ Գարե-գին վարդապետը: Հայրենասէր ընկերութիւնը մի կարգադիր մասնաժողով կազմած էր տարե-դարձի հանդիսին վերաբերեալ գործերը կարգադ-րելու համար և մասնաժողովը որոշած էր Այ-գետանի Գայնկոյանի թաղի եկեղեցւոյ մօտ ընդարձակ գերեզմանատեղին մէջ կատարել հանդէսը: Գարեգին վարդապետ թիւրքաց կառա-վարութեան հաճոյանալու համար, ամեն տեսակ դժուարութիւններ և արգելքներ հանց կարգա-դիր մասնաժողովին առջև, Գայնկոյանի եկե-ղեցւոյ թաղական խորհուրդը դրեց որ թոյլ չը տայ գերեզմանատեղը հանդէս անել, իւր ար-բանեակներու միջոցով ժողովուրդը համոզել ուղեց որ հանդիսի տոմսակներէն չը գնեն և Հայրենասէր ընկերութիւնը վնասուի, վերջապէս ամեն մեքենայութիւններ բանեցուց որ տարե-դարձի հանդէսը չը կատարուի և ինք փաշային աչքը մտնէ: Բայց Հայրենասէր ընկերութիւնը վաղուց հետ աղգին ունեցած այդ իրաւունքը պաշտպանելու համար փաշաներու և նոցա գոր-ծիք վարդապետներու կողմէն եղած ամեն ար-գելքները առ ոտն կոխելով, շատ չքեղ կերպով

կատարեց հանդէսը արդէն որոշված տեղը: Վա-պարականի առաջնորդ խորհման հայրիկը հրա-ման դրեց Գայնկոյանի թաղ. խորհուրդին որ ամեն կերպով օգնեն Հայրենասէր ընկերու-թեան և տարեդարձի հանդէսը անպատճառ կա-տարուի, չը նայելով որ իւր փոխանորդը, Գա-րեգին վարդապետ *) կը ջանար արգելել Հայ-րիկ հրահանգը: Երևմտա եպիսկոպոսի որ նոյն օր հանդիսաւոր պատարագ մատուցանէ Գանկոյա-նի եկեղեցին և յատուկ զիր զրեց Գարեգին վարդապետին որ ինք ալ ներկայ գտնուի հան-դիսին, բայց սա մօլի չարաւ և հանդիսավայրը չեկաւ: Թիւրքաց կառավարութիւնը քաջակեր-ված առաջնորդական փոխանորդ Գարեգին վար-դապետի այս ընթացքէն, զօրքերով եկաւ հան-դիսավայրը, որ եթէ ոչ հանդէսը ամբողջովին, գոնէ ատենաբանութիւնները արգելէ: Հայրե-նասէր ընկերութեան ընտրած մասնաժողովի անդամներէն պ. պ. Մ. Փորթուզալեան և Ջա-ճատ Պէլլեբեան կանուցեցան կառավարութեան որ իրենց յայտարարեց թէ Սուլթանէն յատուկ հեռագիր եկած կայ այդ տեսակ դուրսարձակը և ատենախօսութիւնները արգելու համար: Նոքա պատասխանեցին թէ սա բոլորովին ան-մեղ մի բան է և թէ ատենախօսութիւններուն մէջ ուրիշ բանի վրայ չը պիտի խօսուի, բայց միայն սահմանադրական դրութեան օգուտները և պահանջները ցոյց տալ և Սուլթանին համար բարեմաղթութիւններ անել, որ մի այսպիսի սահմանադրութիւն չորոշած է մեզ: Միանգա-մայն յայտնեցին թէ իրենք չեն կարող խօսք հասկացունել ժողովուրդին որ Սուլթանին համար բարեմաղթութիւններ չանէ և իւր սահմանադ-րութեան տարեդարձը չը տօնէ: Կառավարու-թեան պաշտօնականները համոզուեցան որ այդ հանդէսը արգելելու իրաւունք չունին և թէ ա-տենախօսները սուրին հարուածներով բեմին վառ առնելու սպառնալիքն ալ օգուտ չունեցաւ, թոյլատրեցին: Այդ միջոցին վրայ հասան նաև ռուսական դեր-հիւպատոս ազնիւ պ. Կամարա-կան և բրիտանական դեր-հիւպատոս պ. Կլէյ-տօն:

Պատարագէն վերջը՝ հանդէսը սկսաւ դալով վրայ ձիարշախ խաղերով: Հայոց Վրացաց ընկ. վարժապետանոցի մարմնագրութեան ու-սուցիչ պ. Կարապետ Փիլիպպոսեան ռուսա-յառաջնորդ աշխոյժ և ազգասէր երկաստորդ իւր երկու յառաջադէմ աշակերտներով (Համար-ձում Խանիկեան և Մկրտիչ Թէրլէմզեան միա-տեղ այնպիսի ճարտար խաղեր արաւ ձիարշախ մէջ, որ բոլոր հանդիսականները բուռն ծափա-հարութիւններ արին:

Ահաբոյն ճաշ արուեցաւ և 120-ի չափ տոն-

*) Վանի գաւառական ընդհանուր ժողովը այստեղի առաջնորդ ընտրած է խորհման հայ-րիկը որ հրաժարական տուաւ: Բայց Ներսէս պատրիարք չընդունեց նորա հրաժարականը և առաջարկեց որ մի փոխանորդ ունենայ սովորա-կան գործերը կարգադրելու համար: Գարեգին վարդապետ այստեղ բերուեցաւ իւր փոխանորդ, բայց նա յետոյ սկսաւ հայրիկի ոտքին տակ հր-փորել որ ինքը Վանի առաջնորդ դառնայ:

Բայց եթէ արդոյ ժողովականները մտաբերեն, որ մենք չունենք այնպիսի մի հիմնարկութիւն, ուր ոչ միայն ուսումնաբանական, այլ և ընդհա-նուր ազգային գործիչները կարողանային խմանալ և օգուտ քաղել այն տեղեկութիւններից, որոնք սպասելի են հասարակ ժողովուրդին, նորա վի-ճակին ծանօթ պարունակելից, այսինքն, ուսուցիչ-ներից, եթէ այս մտաբերեն ժողովականները, այն ժամանակ նոքա կը համաձայնվին, որ բա-ւական չեն համառօտ տեղեկութիւններ հասարակ ժողովուրդին վերաբերեալ, այլ դրանք պէտք է լինեն անձնանուէր աշխատանք արդիւնք, կը ներկայացնեն թանգազին զանա ներկայի ցաւերը բժշկելու, իսկ ապագայում անցեալի պատու-թեան համար: Այս միտքը ինչքան պարզ է, այն-քան էլ ըզձալի է տեսնել իրադրութեմ: Ի հարկէ այս նիւթերի կշիռը և խորհուրդը կախված է նոցա կազմողի անձնական յատկութիւններից և այստեղից միթէ մենք չենք կարող տեսնել ինչ-պիսի ուսուցիչներ ունենք. բացի դրանից այդ նիւթերը կազմելը քանի քանի օգուտ կարող է բերել նոյն իսկ ուսուցիչներին: Սակայն այս ա-մենը միայն կողմնակի օգուտներն են, որ կը տան մեզ այդ մանրամասն տեղեկութիւնները. բայց գլխաւորը այն է, որ մենք այնուհետև ճշտու-թեամբ հասու կը լինենք ընդհանուր ազգային նիւթական, մտաւոր և բարոյական դրութեանը:

—Եւ որովհետև այժմ մենք զգում ենք մի տե-տակ ձգտումն ծանօթանալ իրար հետ աւելի մօտ, ուսումն ենք հասկանալ իրար ճանաչելու. կարե-ւորութիւնը, անհրաժեշտ է, որ ապագայ ուսուց-չութեան ներկայացուցիչները, ուսուցչական ժողովին ներկայ լինեն թէ տաճկահայոց և թէ պարսկահայոց, բերելով իրենց հետ թէ ուսումնաբաններին և թէ ընդհանուր ազգին վերաբերեալ նիւթեր: Նմանապէս անչուտ պէտք է ներկայ լինեն այդ ժողովին և այլադա-ւան ուսուցչական ներկայացուցիչները, որովհ-հետև յայտնի է որ՝ կան կաթոլիկ և բողոքական հայ երեխաների համար բաւական ուսումնա-րաններ. և այդպիսի ժողովը կը լինի, ճշմարիտ, ընդհանուր ազգային ուսուցչական ժողով, առանց որ և է խտրութեան: Ո՞վ չէ ցանկանում, ո՞վ չէ հասկանում դրա կարևորութիւնը: Ապագայ ուսուցչական ժողովը միակ յարմար դէպք է, ուր կարելի է մեծախորհուրդ խնդիրների շատ ու քիչ վճելը:

Այս ամենը աչքի առաջ ունենալով՝ «Գործի» յօդուածագրի առաջի միտքը աւելի համակրելի է դառնում: Արդարեւ այն մեծ և ծանր հարցե-րի վճելու համար, որոնք պէտք է բարձրա-նան այդ ժողովին, հարկաւոր է ժամանակ, որ ժողովականները ինչպէս հարկն է նախապատ-րաստվեն և ժողովի ներկայ չը լինեն իրեն

թափոնական ներկայացման այցելուներ, այլ լինեն գործող անձինք, դերասաններ: Վասնորոյ եթէ նախապատրաստող մասնաժողովը ա. յե-տաճէ ժողովը մինչև եկող տարի և բ. եթէ հը-րաւէրներ ուղարկէ տաճկահայոց և պարսկահա-յոց տեսուչներին և ուսուցիչներին ծանօթացնե-լով դրանց ժողովի ծրագրի հետ, ազգին մեծ օ-գուտ տուած կը լինի:

Այժմ մեծ ժողովականներին կը յիշեցնեմ մէկ առաջարկութիւն, որ նոր չէ և թէ Կ. Պօլ-սի և թէ Թիֆլիսի մամուլում յայտնված է և հէնց այս պարագան վկայում է, ինչպէս կարօ-տութիւն կայ այդ առաջարկութեան իրագործ-ման մէջ: Առաջարկված է կազմել մէկ ուսուց-չական ընկերութիւն, որի նպատակը պէտք է լինի ուսուցչիչների նիւթական, մտաւոր և բա-րոյական զարգացումը: Եւ կատարեցնեմ միայն այն, որ շատ ցանկալի է տեսնել այդ ընկերու-թիւնը բաղկացած ոչ միայն ռուսահայերից կամ միայն պարսկահայերից և այլն, այլ հայազգի ու-սուցիչներից առանց որ և ինչ խտրութեան:

Մեր մամուլում չուտ չուտ են երևում առա-ջարկութիւններ կազմել այսպիսի կամ այնպիսի ընկերութիւններ, և այդ առաջարկութիւնները ըստ մեծի մասին մնում են թղթի վրա: Բացի դրանից, գանգատվում են, թէ մենք ես, առա-ւել տաճկահայը շատ ընկերութիւններ ունենք,

ինչպէս ռուսներն են ասում «как? грибо по-тут?» (տուեկի պէս են բուսնում) և թէ դրանք օ-գուտ չեն բերում: Առաջինը սխալ է և անգի-տութեան պտուղ է այն կարծիքը, թէ ընկե-րութիւնները օգուտ չեն բերում: Նրանք օգուտ բերում են. դա անկասկածելի է նրա համար, ով որ տեղեկութիւն ունի նրանց գործունէութեան մասին, բայց որովհետև այդ ընկերութիւնները միայն երէկ սկսեցին գոյութիւն ունենալ, շատ քնական է, որ չեն կարող այնքան օգուտ բե-րել, ինչքան կարելի է պահանջել: Ներկայում պէտք է չը մոռանալ, որ ընկերութեան գործու-նէութիւնը—հասարակութեան գործունէութիւն է. եթէ գանգատվում ես ընկերութեան գործու-նէութեամբ վրա—զանգատվում ես քո անգործու-թեան վրա. կրկնում եմ շատ քնական է մի ընկե-րութեանց դանդաղ ընթացքը: Նրէկ ցանկ ենք, այսօր ուղում ենք հնձել. ինչ որ արած է մինչև հիմա, արած է փոքրամասնութեան շնորհով, այդ սերունդը ամբողջ մտքումը դեռ չեն արմատացի-ւած ինչի վրա պիտի մեր բոլոր ուշը ու միտքը դարձնել:

Մօտկա. Ն. Տ. Գ.